

Պ. Նալբանդեանի աշխատութիւնը մի բարեխիղճ ուսումնասիրութիւն է Ռանքէի պատմական գրութեան և դրանց վերաբերեալ այլոց հեղինակութիւնների. պատմութիւն ուսումնասիրողները հաճութեամբ կկարդան ուսանողական այս գործը: Այս աշխատութիւն ևս — ուրիշ շատերի հետ — սպասցոյց է, որ Գերմանիայի հալ ուսանողները հետաքրքրուում և պարապում են գիտութեամբ. սակայն այս առիթով մի երկու խօսք: Գիտութիւնն ընդհանուր է բոլոր ազգերի համար, բայց ամեն մի ազգի անհատներն էլ ուսումնասիրելով ընդհանուր գիտութիւններն՝ աշխատում են ուսումնասիրել նաև իրենց ազգայինը, որովհետև այդ բնականաբար աւելի մօտ է իրենց սրտին, իրենք աւելի հմուտ են այդ շրջանին, ուրեմն և աւելի ձեռնհաս: Ա՛րդ, հալ ուսանողը նոյնպէս ուսումնասիրելով ընդհանուր գիտութիւնները և ծանօթանալով գիտնական աշխատութեան մեթօդին, ինչո՞ւ իւր ազգային պատմութիւնից և կեանքից չպէտք է վերցնէ և իւր գրական ուսումնասիրութեան նիւթը. միթէ հալոց պատմութեան նիւթը գիտութեան սեպհականութիւն չէ: Միթէ գերմանացիք կարիք ունին, որ հալ ուսանողը ցոյց տալ իրենց Ռանքէի նշանակութիւնը — հարկաւ ո՛չ: Սակայն մենք, հայերս, կարիք ունինք, որ հալ պատմաբան ուսանողը ուսումնասիրէ, պարզէ, լուսաբանէ և քննադատէ հալոց պատմութեան գոնէ նշանաւոր կէտերը, շրջանները՝ համաձայն գիտնական սկզբունքների: Վերջնիս համար հարկաւ աւելի շատ աշխատանք և ջանք պէտք է թափել, սակայն, որքան ձանձուում ենք, պ. Նալբանդեանը աշխատանքից փախչող երիտասարդ չէ:

ՌՐԻՉ

ԲԺ. Միմէօն Շահնազարեանց. Հայ դպրոցի ցաւերից. I. Վարչականի շուրջը. էջ XIX+43. Մոսկուա 1890. տպ. Է. Բարխուդարեանի:

Յարգելի բժ. Շահնազարեանը, որ երկու տարի տեսչի պաշտօն է վարել Երևանի հալոց թեմական հոգևոր դպրոցում, մեծ եռանդով նուիրուել է մանկավարժական խնդիրներ լուծելուն և մեր թեմական դպրոցները կանոնաւորուած տեսնելու բաղձանքներ ունի: Այս հինգերորդ թէ վեցերորդ գիրքն

է, որ նուիրում է նա ալգ խնդիրներն մշակման և ձրի ուղարկում է, եթէ չեմ սխալուում, բոլոր թեմական դպրոցների բոլոր ուսուցիչներին: Գովելի և չտեսնուած շնորհաբաշխութիւն:

Սակալն ստիպուած ենք մի անհամեստ հարց տալ հեղինակին. ինչ միտք ունի ալգ գրքերի հրատարակութիւնը. Լնթադրենք թէ դուք առատածեռն մարդ լինելով՝ նիւթական միջոց չէք խնայում ալգ հրատարակութիւններն ընտիր թղթի վրայ և գեղեցիկ տպագրել տալ, սակալն ում համար:

Արտակարգ համբերութիւն ունեցող մարդ պէտք է լինի — ես դոցանից մէկն եղալ — որ կարողանայ «չալ դպրոցների ցաւերից» զիրքը կարդալ. սա մի շարադրութիւն չէ, ալլ ցլտատների չտեսնուած մի քանի, որի մէջ ամենաէականն և մեծ դերը արուած է — չակերտներն: Չակերտ, չակերտ և անվերջ չակերտ. վերնագիրները չակերտներով լի, բնագիրը չակերտներով լի, ծանօթութիւնները չակերտներով լի — մի խօսքով որքան դրժի մէջ բառ, համարեան թէ ալլքան էլ չակերտ կալ: Ալգ չակերտների հետեանքն է, որ մարդ շիթուում է կարդալիս, լողնում է և կարդացածն էլ չէ հասկանում. եթէ աւելացնենք և ալն հանգամանքը, որ հեղինակի լեզուն շատ նման է քառասնական թուականների անմշակ աշխարհաբարին, պատկերը լիակատար կլինի: Սխալ հալերէն ոճերով և երկար, շատ երկար պարբերութիւններով լի է գրուածքը — օրինակ մի նախադասութիւն բաղկացած է 94 (!!) բառից (էջ 34), մի ուրիշը՝ 81 բառից (էջ VIII), երրորդը՝ բաղկացած է հարիւր տասը (!!!) բառից (էջ 15), չորրորդը 73 բառից (էջ 22—23), հինգերորդը հարիւր քսան և ութը (128) բառից (էջ 3—4): Ես երկիւղ եմ կրում որոնելուց, որ չլինի թէ աւելի երկար նախադասութիւն գտնեմ: Ահա՛ ձեր հաշակաւոր չակերտների հետեանքը, պարոն բժիշկ — միթէ՛ ձեր ցանկութիւնը կարող է լինել, որ կարդացողի շունչը կտրուի:

ձիշդ է, երբեմն պատահում է, որ մի որ և է հեղինակ ողորուելով իւր նիւթով, ուշադրութիւն չէ դարձնում ալն հանգամանքի վերայ՝ թէ արդեօք ուրիշներն իրեն պէտք է հասկանան թէ ոչ: միայն զարմանում ենք, որ այլ բժիշկը մի անձնական անկեղծ բարեկամ չէ ունեցել, որ անկեղծօրէն խորհուրդ տար նրան՝ մի ալլ ձեռով հրատարակել իւր աշխատութիւնները: Չեղինակի դատողութիւններն էս պէս:

չատ ճիշդ են, ձգտումները համակրելի, եռանդը՝ գովելի, բերած փաստերն՝ իրական. արդ սլատուաւով անձ մենք խորհուրդ ենք տալիս նրան՝ ձեռք վերցնել բազմաքանակ ցիտատներէից ու չակերտներէից, վաստեր առաջ բերել և եզրակացութիւններն ու առաջարկութիւններ անել, և որ զլսաւորն է՝ գիրքը սոցադրութեան լանձնելուց առաջ՝ կարիշակ հաւերէն գրել իմացող բարեկամներէից մէկի մօտ: Այս ձևով միայն պ. րժ. Շահնազարեանցի մտքերից կարող են օգտուել ուրիշները:

ՌՐԻԶ

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- Մ. ԿՕՐԷԼԼԻ. Մի մանկան հողու պատմութիւն. վէպ ոչ մանուկների համար. Թարգմ. Տ. Վ. Վաղարշապատ 1902.
- ՔԺ. Ա. ԲՈՒՂՈՒՂԵԱՆ. Առողջապահական նուէր նորատիկանանց. Ալէքսանդրապօլ 1901.
- Նոր զպրոց. պատկ. տարրական ընթացք. Զ. պրակ. հրատ. Սմբ. Դաւթեան. Կ. Պօլիս 1901.
- Էմիլեան ազգագրական ժողովածու. հատ. ա. Փշրանք Շիրակի ամբարներից, հաւաքեց Աղ. Մխիթարեանց, Մոսկուա—Ալէքսանդրապօլ 1901.
- Dr. Wahan Nalbandian. Leopold von Rankes Bildungsjahre und Geschichtsauffassung. Leipzig 1902.
- Սիմէոն սրկ. Մնացականեան. Հտալնտիր աղօթքներ Հալաստաննայց ս. եկեղեցու հանդերձ ուսուերէն թարգմանութեամբ. Ս. Պ. Բուրղ. 1902.
- Է. Հէրարտ. Յուդայի վերջին գիշերը. Թարգմ. Խաչ. ք. Փանեանց. Թիֆլիս 1902.
- Փարիօլա. Թարգմ. նոյն. Թիֆլիս 1902.
- Բարեպաշտները. գրեց նոյն. Թիֆլիս 1902.
- Ա. ՊՈՒՂԿԻՆ. Յաւերժահարսը. Թարգմ. Կոստ. Կրասիլնիկեան. Թիֆլիս 1902.
- Ա. Լ. ՓՕՆՍ ԴՕՂԷ. Յրօմօն կրտսեր և Ռիսլէր աւագ. Թարգմ. Տ. Յովհաննիսեան. Թիֆլիս. 1902.
- ԿՈՄԱ Լ. Ն. ՏՕԼԱՏՕԻ. Յարութիւն. Թարգմ. Տ. Յովհաննիսեան. Թիֆլիս 1902.